ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Վերին Գետաշենի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում՝ երաժշտության դաստիարակի՝ 1,25 դրույքաչափով, հատուկ մանկավարժի՝ 0,5 դրույքաչափով թափուր աշխատատեղերը համալրելու համար:

Մրցույթին կարող է մասնակցել երաժշտության դաստիարակի և հատուկ մանկավարժի՝ թափուր պաշտոնին Կրթության և գիտության նախարարի 2024 թվականի մարտի 27-ի N 20-Ն հրամանով սահմանված տարիֆաորակավորման պահանջներին համապատասխանող անձը: Մրցույթը անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ 22.10.2024թ-ի № 1981-Ա/2 հրամանի մշակված հարցաշարերի:

Մրցույթին մասակցելու համար ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1).
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).
3) անձը հաստատող փաստաթուղթ.
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).
5) ինքնակենսագրություն (Ձև 4).
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթը տեղի կունենա 2025 թվականի մարտի 24-ին ժամը՝ 14^{00} -ին «Վերին Գետաշենի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնք Վերին Գետաշեն բնակավայր 13-րդ փողոց 4 շենք: Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ընդունվում են 19.02.2025թ.-ից մինչև 18.03.2025թ. ներառյալ, ամեն օր ժամը 10:00 - 18:00 բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Վերին Գետաշեն բնակավայր 13-րդ փողոց 4 շենք:

Էլեկտրոնային փոստի հասցե՝ mankapartez21@mail.ru:

Տեղեկությունների համար զանգահարել +374 94029764 :

Տնօրեն՝ Թամարա Կարապետյան: